ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«18» Հոկտեմբեր 2018 թվականի № 54-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 մարտի 26-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 24 և 2018 թվականի փետրվարի 12-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 255 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հունվարի 16-ի թիվ Ֆ-05/18 գրությունը, «ՍՏԵՓԳԱԶ» ՍՊ ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 7 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՍՏԵՓԳԱԶ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/582 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասարի դոլերիտային բազալտի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասը՝ 1.X=4542459 Y=8440763,5, 2.X=4542486.5 Y=8440746, 3.X=4542559.5 Y=8440826, 4.X=4542561.5 Y=8440830,5 5.X=4542578 Y=8440870, 6.X=4542588.5 Y=8440887.5, 7.X=4542599 Y=8440902, 8.X=4542583 Y=8440917, 9.X=4542562 Y=8440903.5 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 94.7 հազար մ^3 դոլերիտային բազալտի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-582 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4542459 Y=8440763.5, 2.X=4542486.5 Y=8440746, 3.X=4542559.5 Y=8440826, 4.X=4542561.5 Y=8440830.5, 5.X=4542578 Y=8440870, 6.X=4542588.5, Y=8440887.5, 7.X=4542599 Y=8440902, 8.X=4542583 Y=8440917,

9.X=4542574.5 Y=8440941, 10.X=4542561 Y=8440945.5, 11.X=4542543 Y=8440945, 12.X=4542533.5 Y=8440941, 13.X=4542509.5 Y=8440914 , 14.X=4542493.5 Y=8440886, 15.X=4542477.5 Y=8440835, 16.X=4542450 Y=8440806, 17.X=4542447 Y=8440800, 18.X=4542444 Y=8440780 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 1.5 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 1985 մ^3 մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -582 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասարի դոլերիտային բազալտի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 582 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ